

Աշխարհում ծնողները ծախսում են 44,221 ԱՄՆ դոլար իրենց երեխայի կրթության համար՝ տարրական դպրոցից մինչև համալսարան

- *Աշխարհում ծնողների 87%-ն օգնում է վճարել իրենց երեխայի ուսման համար*
- *Ծնողների 76%-ը, ով նախատեսում է նաև հետբուհական կրթություն, ակնկալում է, որ ներդրում կունենա երեխայի ուսումը ֆինանսավորելու մեջ*
- *Ծնողների 74%-ն ընթացիկ եկամուտից է հոգում երեխայի ուսման ծախսերը*
- *Ծնողների մեծ մասը (82%) պատրաստ է հանուն երեխայի հաջողության անձնական զոհողությունների գնալ*

HSBC-ի «Կրթության արժեքը» շարքի վերջին՝ *Ավելի ու ավելի բարձր* զեկույցի համաձայն՝ ծնողները ծախսում են միջինում 44221 ԱՄՆ դոլար իրենց երեխայի՝ տարրական դպրոցականից մինչև համալսարանական կրթության ծախսերը հոգալու համար: 15 երկրներում և տարածաշրջաններում բնակվող ավելի քան 8400 ծնողների շրջանում անցկացված հարցման համաձայն հետևյալ երկրներում բնակվող ծնողներն ամենամեծ ֆինանսական ներդրումն ունեն իրենց երեխաների կրթական բոլոր ծախսերի առումով՝ Հոնկոնգում (132161 ԱՄՆ դոլար), ՄԱԷ-ում (99378 ԱՄՆ դոլար) և Մինգապուրում (70939 ԱՄՆ դոլար):

Ծնողների մեծամասնությունը (87%) օգնում է վճարել իրենց երեխայի՝ ներկայիս փուլի կրթության համար: Նրանց 85%-ը վճարում է նաև հետագա բուհական կամ միջին մասնագիտական կրթության համար:

Ուսանողական վարկերի հետ մեկտեղ բարձրագույն կրթություն ստացող ուսանողների միայն 15%-ն է օգնում վճարել կրթության համար: Ուսանողների 16%-ն օգտվում է պետական աջակցությունից (կրթաթոշակ, հովանավորի աջակցություն կամ դրամաշնորհ), իսկ 8%-ը՝ դպրոցի և համալսարանի կողմից տրամադրվող ֆինանսական աջակցությունից:

Հայաստանը զեկույցի երկրներում ներառված չէ, սակայն հետաքրքիր է որոշ համեմատականներ անցկացնել HSBC հետազոտության արդյունքների և Հայաստանի վիճագրական տվյալների միջև¹: 2015թ.-ի դրությամբ 5-9 դասարաններում սովորող աշակերտների ծնողները մեկ երեխայի հաշվով միջինում ծախսել են ամսական 3467 ՀՀ դրամ, իսկ ավագ դասարաններում սովորող երեխաների ծնողները՝ 6300 ՀՀ դրամ:

Թեև Հայաստանում պարտադիր կրթությունն անվճար է, շատ ծնողներ դժվարանում են հոգալ իրենց երեխաների ընթացիկ ուսումնական ծախսերը: 2015թ.-ի ընթացքում 15-17 տարեկան պատանիների 13.8%-ը որևէ ուսումնական հաստատություն չի հաճախել: Նրանցից 3.7%-ը պատճառաբանել է, որ կրթական ծառայությունները շատ թանկ են: Հայաստանում 2016-2017թթ. ուսումնական տարում պետական դպրոցներում սովորում էր 357052 աշակերտ, իսկ ոչ պետական դպրոցներում՝ 7816 աշակերտ:

Փոլ Էդգարը՝ HSBC Բանկ Հայաստանի գլխավոր գործադիր տնօրենը, մեկնաբանում է. «HSBC-ի զեկույցի համաձայն՝ ողջ աշխարհում ծնողները գիտակցում են, որ կրթությունը կարևոր է ապագայում հաջողությունների հասնելու աշխատաշուկայի մրցունակության պայմաններում: Այսօր, ավելի քան երբևէ, ծնողները պատրաստ են հավելյալ ջանք գործադրել իրենց երեխայի ուսման ծախսերը վճարելու համար՝ անգամ անձնական զոհողությունների հաշվին: Այդուհանդերձ, երեխաների ուսման ծախսերի ֆինանսական դժվարությունները թեթևացնելու համար անհրաժեշտ է մշակել երկարաժամկետ ֆինանսական պլան և սկսել նախապես խնայողություններ անել»:

Հաջողության ուղի

Երբ ծնողներն արտահայտում են իրենց նախընտրությունները մասնագիտական դասընթացների մասին, որ կցանկանային իրենց երեխաները ուսումնասիրեն համալսարանում, ապա նշում են բժշկությունը (13%), բիզնեսը, կառավարումը և ֆինանսները (11%), նաև ճարտարագիտությունը (10%):

Ավելին, 10 ծնողից 9-ը (91%) ցանկանում է, որ իր երեխան հետբուհական կրթություն ստանա, որոնցից 76%-ը նախատեսում է ներդրում ունենալ այդ ծախսերը հոգալու առումով: 10 ծնողից մոտ 8-ը (78%) կարծում է, որ հետբուհական կրթությունը կարևոր է նախընտրած մասնագիտությամբ լրիվ դրույքով աշխատանք գտնելու հարցում:

Ասիայում բնակվող ծնողներն ավելի լավատես են, որ իրենց երեխաները կիրագործեն իրենց ներուժը: Թեև աշխարհում ծնողների 75%-ը վստահ է, որ իրենց երեխան պայծառ ապագա կունենա, այդ կարծիքն ունեցող ծնողների 87%-ն ապրում է Հնդկաստանում, 84%-ը՝ Չինաստանում: Մինչդեռ Ֆրանսիայում ծնողներն ավելի զգուշավոր են. նրանց ընդամենը 42%-ն է համոզված, որ իրենց երեխային պայծառ ապագա է սպասում: Հնդկաստանում և Չինաստանում ծնողների 85% և 78%-ն է վստահ, որ իրենց երեխան լավ աշխատանք կգտնի, իսկ ողջ աշխարհում այս ցուցանիշը միջինում կազմում է 68%: Ֆրանսիայում ծնողների ընդամենը 36% է վստահ, որ իրենց երեխան շատ լավ աշխատանք կունենա:

Պլանավորելով ապագայի համար

Թեև ծնողները պատրաստակամ են աջակցել իրենց երեխաներին մասնագիտական առաջխաղացման համար, շատերը նախապես չեն պլանավորում խնայելու միջոցով հոգալ իրենց երեխայի շարունակական կրթության հետ կապված զգալի ծախսերը:

Ծնողների գրեթե երեք-քառորդը (74%) երեխայի ուսման ծախսերը հոգում է ընթացիկ եկամուտներից, իսկ մոտ քառորդը (22%) ընդունում է, որ չգիտի, թե տարեկան որքան է ծախսում իր երեխայի կրթության համար: Շատ ծնողներ ֆինանսական զոհողությունների են գնում իրենց երեխայի ուսման վարձը վճարելու համար. ավելի քիչ գումար են ծախսում ժամանցի վրա (40%), ավելի երկար են աշխատում (21%), ավելի քիչ երկարաժամկետ խնայողություններ կամ ներդրումներ են կարողանում անել (20%), աշխատանք կամ երկրորդ աշխատանք են գտնում (18%): Ավելին, ծնողների 82%-ը պատրաստ է անձնական զոհողությունների գնալ, որպեսզի իրենց երեխան հաջողության հասնի:

Հարցումների դեպքում դիմել HSBC Հայաստանի հասարակայնության հետ կապերի գծով մենեջեր Արմինե Բաբուրյանին,
Հեռախոս՝ + 374 60 655 345 էլ. փոստ՝ arminebaburyan@hsbc.com

Լրացուցիչ տեղեկություններ

* Ծախսեր կրթության համար (մեթոդաբանություն)

Ուսման ծախսերը հաշվարկելու համար տարեկան ծախսի մասին հարցումներ են անցկացվել այն ծնողների շրջանում, ովքեր ներկայումս հոգում են իրենց երեխայի տարրական, միջնակարգ և բարձրագույն կրթության ծախսերը (ուսման վճար, դասագրքեր, տրանսպորտ, կացարան):

Տարեկան գումարը, որ ծնողները միջինում ծախսում են իրենց երեխայի կրթության յուրաքանչյուր փուլում, բազմապատկվել է տվյալ երկրում կրթական ամեն փուլի տևողության հետ՝ հաշվարկելու այն ամբողջական գումարը, որ ծախսվում է երեխայի կրթության համար:

Փոխարժեքները հիմնված են NZForex 2016 տարեկան տոկոսադրույքի վրա:

Կրթության արժեքը

«Կրթության արժեքը» HSBC-ի պատվերով իրականացված անկախ հետազոտություն է կրթության վերաբերյալ գլոբալ միտումների մասին: «Ավելի և ավելի բարձր»-ը այս շարքի չորրորդ զեկույցն է, որը հրապարակվել է 2017թ-ի հունիսին: Այն ներկայացնում է 8481 ծնողի տեսակետ աշխարհի 15 երկրներից և տարածաշրջաններից. դրանք են Ավստրալիան, Կանադան, Չինաստանը, Եգիպտոսը, Ֆրանսիան, Հնդկոնգը, Հնդկաստանը, Ինդոնեզիան, Մալայզիան, Մեքսիկան, Սինգապուրը, Թայվանը, Միացյալ Արաբական Էմիրությունները, Միացյալ Թագավորությունը և Միացյալ Նահանգները:

Հարցումներին մասնակցել են նշված երկրներում կամ տարածաշրջաններում բնակվող ծնողներ, ովքեր ունեն մինչև 23 տարին լրացած առնվազն մեկ երեխա, ով սովորում է կամ պատրաստվում է սովորել: Ուսումնասիրությանը մասնակցող ծնողների նվազագույն ընտրանքը 500 հոգի է՝ ներառյալ 150 ծնող, ում երեխան սովորում է համալսարանում կամ քոլեջում: Միացյալ Թագավորությունում հարցումներին մասնակցել է 1001 ծնող (ներառյալ 202 ծնող, ում երեխան սովորում է համալսարանում կամ քոլեջում): Չինաստանում հարցումներին մասնակցել է 946 ծնող (ներառյալ 504 հոգի Մարգարտյա գետի գետաբերանի տարածաշրջանից):

Ուսումնասիրությունն անցկացվել է առցանց՝ Ipsos MORI-ի կողմից 2017թ-ի փետրվարին: Հավելյալ դեմ առ դեմ հարցումներ են արվել Եգիպտոսում:

¹Հայաստանի վերաբերյալ վիճակագրական տվյալները վերցված են ՀՀ ազգային վիճակագրության ծառայության «Հայաստան. ոչ նյութական աղքատությունը» և «Հանրակրթական հաստատությունների գործունեությունը 2016/2017 ուսումնական տարում» հրապարակումներից՝

http://www.armstat.am/file/article/poverty_2016a_4.pdf

http://www.armstat.am/file/article/sv_03_17a_5150.pdf:

HSBC Խումբ

HSBC Holdings plc-ն՝ HSBC Խմբի ընկերության գլխամասը, գտնվում է Լոնդոնում: Խումբն իր հաճախորդներին ծառայություններ է տրամադրում իր մոտ 3,900 գրասենյակներից, որոնք գտնվում են 67 երկրներում և տարածաշրջաններում՝ Եվրոպայում, Ասիայում, Հյուսիսային և Լատինական Ամերիկայում, ինչպես նաև Մերձավոր Արևելքում և Հյուսիսային Աֆրիկայում: HSBC-ն հանդիսանում է աշխարհի ամենախոշոր և հզոր ֆինանսական կառույցներից մեկը, որի ակտիվները 2017թ-ի հունիսի 30-ի դրությամբ կազմել են 2,492 միլիարդ ԱՄՆ դոլար:

HSBC-ն Հայաստանում

Բանկը հիմնադրվել է 1996թ.-ին՝ որպես փակ բաժնետիրական ընկերություն «Midland Armenia Bank» ԲԸ անվանումով: 1999թ.-ին վերանվանվել է «Էյչ-Էս-Բի-Սի Բանկ Հայաստան» ՓԲԸ-ի: Բանկը համատեղ ձեռնարկություն է, որի 70%-ը պատկանում է HSBC Խմբին, իսկ 30%-ը՝ արտերկրի հայ գործարարներին: Էյչ-Էս-Բի-Սի Հայաստանը սպասարկում է շուրջ 30,000 հաճախորդի Երևան քաղաքում գտնվող իր 9 գրասենյակների և մոտ 420 աշխատակիցների միջոցով: 2017թ.-ի հունիսի 30-ի դրությամբ բանկի ակտիվները կազմել են 215 մլրդ. ՀՀ դրամ: